ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

ՂԵԿԱՎԱՐ- պատմության գիտությունների թեկնածու՝ ԿԱՐԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ - Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի՝ ԳՈՀԱՐ ԲՐՅԱՆ

Պատրաստ է պաշտպանության

2023թ

Բովանդակություն

Ներածություն ……..3

Գլուխ 1-ին: ՏՀՏ-ի դերն ու նշանակությունը ուսուցման բնագավառում ……4

Գլուխ2-րդ: Ուսուցման տեխնիկական միջոցների տեսակները և դրանց տեղը պատմության դասի ժամանակ…….. ……..11

Եզրակացություն ……17

Օգտագործված գրականության ցանկ ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XXI դարի հանրակրթական դպրոցը չի կարելի պատկերացնել առանց ուսուցման բազմազան տեխնիկական միջոցների լայն օգտագործման, առանց տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման (այսուհետ՝ ՏՀՏ): ՏՀՏ-ն տեխնոլոգիաների ամբողջությունն է, որոնք ներկայումս մշակվել են առավել արդյունավետ տեղեկատվության և հաղորդակցության համար: Այն ձևափոխել է ինչպես գիտելիք ձեռք բերելու ձևը, այնպես էլ մարդկային հարաբերությունները՝ դառնալով ժամանակակից դպրոցի բաղկացուցիչ մաս և ուսուցման արդյունավետության բարձրացման լավագույն միջոց: Աշակերտների մոտ այն զարգացնում է **թվային և մեդիա կարողունակությունը, սովորել սովորելու կարողունակությունը:**[1]

ՏՀՏ-ի նպատակասլաց օգտագործումը մատուցվող թեման դարձնում է էլ ավելի համոզիչ, ավելի դյուրըմբռնելի, բազմապատկում սովորողների ուշադրությունն ու հետաքրքրությունը: Վերջին տարիներին ՏՀՏ-ները կարևոր դեր են խաղացել նոր կրթական քաղաքականության և նախագծերի մշակման գործում, քանի որ դրանք ազդել են գիտելիքների ձեռքբերման ձևի վրա: Դրանք ավելի դյուրին են դարձրել կրթությունը սակայն նաև լայն մարտահրավերներ են առաջացրել:Այս իմաստով, կրթության համար մշակվել են ինտերնետային պրոտոկոլային ծառայություններ և պլատֆորմներ, որոնք հնարավորություն են տվել վերանայել ուսուցման մոդելները: Դրանց թվում կարելի է դասել Moodle, Google forms ,Microsoft Classroom, Zoom և այլ հարթակները : Այստեղ օգտագործվում են ռեսուրսներ, ինչպիսիք են ինտերակտիվ գրատախտակները, վիրտուալ լսարանները, քննարկման սենյակները, ֆորումները, հարցաթերթիկները, գծապատկերները, տեսալսողական ռեսուրսները, թվայնացված մատենագիտությունը, առցանց համագործակցության փաստաթղթերը, պորտֆելները, կրթական խաղերը և այլն: Այսպիսով, ՏՀՏ միջոցները փոփոխում են ուսուցման կառուցվածքն ու ընթացքը և գրեթե բացառում ավանդական ձևով ու մեթոդներով դասի գործընթացի կազմակերպումը:

Այս աշխատության նպատակն է ցույց տալ ՏՀՏ-ի դերը կրթության ոլորտում մասնավորապես՝ պատմության դասաժամին, ներկայացնել, թե ինչպես է ՏՀՏ գործիքների

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

կիրառումը ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնում պատմության դասը, մատնանշել նրա լայն հնարավորությունները և կիրառման տարբերակները,որպես խնդիր՝ վեր հանել դրա դրական և բացասական կողմերը:

ԳԼՈՒԽ I

ՏՀՏ-ի ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համակարգչի , սմարթֆոնի և համացանցի կիրառնումը այսօր ամենատարածված միջոցներից են: Երբ մարդկային գործունեության գրեթե բոլոր ձևերը այս կամ այն չափով իրականացվում են այս սարքավորումներով, այն դադարում է սոսկ հզոր տեխնիկական միջոց լինելուց եւ դառնում է ընկերային կյանքի վրա մեծապես ազդող գործոն, հասարակական արմատական փոփոխությունների զորեղ խթան:

Պատմության դասը վարողն իր գործունունեությունը այսօր չի կարող կառուցել ու զարգացնել առանց տեխնիկայի օգտագործման, որը լայն հնարավորություն է տալիս հետազոտող դասավանդողին ստեղծագործելու և մտքի թռիչքը մինչև տիեզերք հասցնելու համար: Պատմության դասերի ժամանակ տեխնիկական միջոցներն օգտագործելիս անգնահատելի է համակարգիչների ու ինտերնետային տեղեկատվության դերը: Այսօր ուսուցման բարձր որակ ապահովող գործիքներից մեկն էլ ՏՀՏ-ի կիրառումն է դասապրոցեսում:

Ուսուցման ակտիվ մեթոդների զարգացումը և կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ նոր մանկավարժական և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը: Դպրոցական և համալսարանական կրթությունն այսօր չի կարող հավակնել վերջնական և լիարժեք գիտելիքների դարբնոցի դերին, քանի որ յուրաքանչյուր հերթական տեղեկատվական պայթյուն գրեթե ի չիք է դարձնում նախորդի կարևորությունը: Ահա թե ինչու սովորողին պետք է նախ և առաջ սովորել սովորեցնել, այսինքն՝ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հմտություններ տալ, որի արդյունքում կրթությունը կարող է դառնալ անընդհատ, շարունակական ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում:

Գիտելիքը պետք է գնա դեպի մարդը, այն պետք է մատչելի և հասանելի դառնա յուրաքանչյուրի համար: Համաշխարհային սարդոստայնի ձևավորումը հնարավորություն է ընձեռնում օգտագործելու գիտելիքի ողջ զինանոցի պաշարները և մտավոր ներուժը:

Համակարգիչների և ժամանակակից էլեկտրոնային միջոցների ներդրումը կրթական համակարգ չի կարելի ընկալել որպես ուսուցման պրոցեսի սոսկ տեխնիկական վերազինում: Մտնելով դասարան համակարգիչը փոխում է դասապրոցեսի կազմակերպման բուն սկզբունքները, ստեղծելով կրթական բոլորովին նոր միջավայր: Էապես փոխվում է ուսուցչի և աշակերտի աշխատանքի բովանդակությունն ու ձևը, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը: Դասապրոցեսի կազմակերպման իմաստով ամենակարևորն այն է, որ դասարանում նոր ինֆորմացիայի կրողն արդեն միայն ուսուցիչը չէ: Դասարանում կա համակարգիչը, որը ինֆորմացիայի պարունակությամբ ակնհայտորեն գերազանցում է ուսուցչին: Սա գիտեն թե՛ աշակերտները և թե՛ ուսուցիչը: Ինֆորմացիայի հաղորդման ձևերի իմաստով ուսուցիչը նույնպես զիջում է համակարգչին: Բնական հարց է ծագում. այդ դեպքում արդյո՞ք ուսուցիչն ավելորդ օղակ չի դառնում համակարգչի և աշակերտի միջև: Դժվար է այս հարցին միարժեք պատասխանել: Եթե նայենք տեխնիկայի զարգացման ժամանակակից տեմպերի տեսանկյունից, գուցե ապագայում այդպես էլ լինի: Բայց մյուս կողմից համակարգիչը որքան էլ խելոք ու բազմագիտակ լինի, նա անշունչ առարկա է, սովորական արկղ՝ լցված բազմապիսի հրաշագործ դետալներով: **Համակարգչի մոտ բացակայում է մարդկային ոգին, կենդանի շունչը, զգացմունքայնությունը: Սրանում է ուսուցչի հիմնական առավելությունը համակարգչի նկատմամբ:** Այնպես որ, դեռ անորոշ երկար ժամանակ ուսուցիչը կմնա դասապրոցեսի կենտրոնական առանցքը: Համակարգիչը պետք է դառնա ուսուցչի ամենակարող օգնականը դասապրոցեսի կազմակերպման գործում: Այն մեծացնում է ուսուցանվող նյութի յուրացման արագությունը, բայց ոչ զգալի չափով, քանի որ այդ արագությունը որոշվում է աշակերտի ուղեղի ընկալման շեմով: Ուստի չպետք է մտածել, որ համակարգչային տեխնիկայի կիրառումը զգալիորեն կկրճատի ուսման տևողությունը: Հնարավոր է նաև ուսուցման պրոցեսի դանդաղում, քանի որ համակարգիչը թույլ է տալիս խորամուխ լինել երևույթի այնպիսի մանրամասների ուսումնասիրման մեջ, որոնք ուսուցման տրադիցիոն մեթոդների դեպքում չեն շոշափվում:

Պատմությունն ուսումնասիրողների համար առանձնապես անսահմանափակ

հնարավորությունը է ստեղծում **ինտերնետային գլոբալ տեղեկատվական ցանցը**:

Ինտելեկտուալ այս հսկա սարդոստայնը փորձում է ընդգրկել ողջ մարդկային բանականության պտուղները, քաղաքակրթության ողջ հիշողությունը: Ինտերնետը ֆանտաստիկ հնարավորություն է ստեղծել ցանկացած պահի կապվել աշխարհի գրեթե ցանկացած մասնագետի հետ, ստանալ ցանկացած անհրաժեշտ տեղեկություն: Ունենալով ինտերնետով աշխատելու հնարավորություն, աշակերտը ոչ միայն ստանում է լիարժեք ինֆորմացիա օրվա իրադարձությունների մասին, այլ կարող են բացել ցանկացած պատմական դեպքերին ու դեմքերին վերաբերող ինտերնետային էջը և ստանալ բազմակողմանի հանրագիտարանային տեղեկություններ:(Օ/կ Վիքիպեդիայի էջերը) Այստեղ նրան օգնության է հասնում ժամանակակից սմարթֆոնը, պլանշետը, նոթբուքը:

Այժմ պատմական շատ թեմաներով գոյություն ունեն պատրաստի դասեր, որոնք հնարավորություն են ընձեռում սովորողին ինքնուրույն խորացնել իրենց գիտելիքները պատմություն առարկայից: Դպրոցականների համար կարևոր նշանակություն է ստանում պատմական թեմաներով ինտերնետային և համակարգչային խաղերը, գլուխկոտրուկները, փազլ-քարտեզներըև այլն: Նրանք ասես անմիջականորեն մասնակցում են տվյալ շրջանի հասարակական – քաղաքական կյանքին և իրենք էլ խաղում հանդես են գալիս որպես քաղաքական գործիչ՝ թագավոր, զորավար, եգիպտական փարավոն և այլն: Այստեղ հարկ է նշել նաև ստեղծագործ-ուսուցչի և նրա կողմից կիրառվող բազմաթիվ ծրագրերի՝ **Quizizz , Kahoot, Socrative, Google forms, Learning Apps** և այլ ծրարերի մասին: Այստեղ թե՛ արդեն պատրաստ և թե՛ ուսուցչի կողմից ստեղծված նոր նյութերը օգնում են էլ ավելի հետաքրքիր և բազմաբովանդակ դարձնելու պատմության դասը: Սովորողները հնարավորություն են ունենում ոչ միայն ստանալ պատմական գիտելիքներ, այլ ՝մասնակից դառնալով՝ պատմական իրադարձություններին, կատարել որոնողական աշխատանքներ, արտահայտել իրենց տեսակներն ու մոտեցումները տվյալ պատմական երևույթների մասին իսկ ուսուցիչին լայն հնարավորություններ են ընձեռնվում կատարելու **ձևավորող և միավորային գնահատում :** Անշուշտ, ուսուցչից հսկայական ջանքներ և գիտելիք է պահանջվում այս ամենը կազմակերպելու, համակարգելու և ստեղծելու համար: Սակայն համակարգիչներ օգտագործելու ունակությունը այսօր նույնքան կարևոր է, որքան կարդալու, գրելու, ձայնագրելու, մեքենա վարելու կամ հեռախոսից օգտվելու ունակությունը: Հարկ է նշել նաև **ամպային տեխնոլոգիաների (Google disk, Облака, One**

drive) մասին, որոնք հնարավորություն են տալիս պահպանել արդեն պատրաստի ողջ նյութը և հասանելի դարձնել 24/7 ձևաչափով:

Իսկ ինչպե՞ս կարող է տեխնոլոգիան բարձրացնել ուսման որակը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր: Տարբեր դասարաններում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները օգտագործում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար Ակնհայտ է, որ համակարգիչն ուսուցչին ազատում է ձանձրալի, միապաղաղ գործողություններ կատարելուց, իրական հնարավորություններ է ստեղծում կենտրոնանալու գործունեության ստեղծագործական կողմերի վրա: Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և այլ բացառիկ հնարավորությունները, դասը կարելի է դարձնել պարզ, դիտողական և նույնիսկ հրավիրող: Համակարգիչը կարող է օգնել ուսուցչին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար: Վերջերս համակարգչի օգնությամբ վերականգնվել է պատմական հայտնի դեմքերի և կառույցների **3 և 7 D ձևաչափով պատկերները**, որը հնարավորություն է տալիս ավելի կատարյալ և մանրամասն դիտել նրանց, տեղափոխվել անցյալ և կատարել եզրահանգումներ: Էկրանին ցուցադրվող գործողությունների հաջորդականությունը կարող է ըմբռնելի դարձնել մատուցվող նյութը, վերացական գրքային նյութը կարող է վերածվել մի պրակտիկ իրադրության: Իհարկե, համակարգչի օգտագործումը ոչ բոլոր նյութերի բացատրության և քննարկման ժամանակ է նպատակահարմար. այս դեպքում այն կարող է ստեղծել ավելորդ ծանրաբեռնվածություն: Ուստի նյութի ընտրությունը պետք է կատարել նրա՝ համակարգչային ներկայացման արդյունավետությունից ելնելով: Համակարգչի ներդրումը շատ կարևոր է, քանի որ աշակերտները սովորում և զարգանում են տարբեր արագությամբ, այսինքն՝ տեխնոլոգիան կարող է անհատականացնել ուսուցումը: Նրանք պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները, այս դեպքում տեխնոլոգիաները նպաստում են, որ, օրինակ՝ աշակերտները բանավիճեն, քննարկեն, սեփական կարծիք արտահայտեն և այլն: Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգանում են աշակերտների մտածողությունն ու հմտությունները: 2023թ. նոր ՀՊՉ-ով հանրակրթական դպրոցներում ներդրվեց պարտադիր **նախագծային աշխատանքի**

կատարում աշակերտի կողմից: Այս առումով համակարգիչը մեծ հնարավարություն է տալիս աշակերտին սպառելու իր երևակայությունը և ապահովելու մտքի բարձր թռիչք իր կատարելիք աշխատանքում:

Դասարանում ցուցադրվող ֆիլմերը, տեսահոլավակները, համակարգչային անիմացիայի միջոցներով մոդելավորված տեսարանները հսկայածավալ ինֆորմացիա են պարունակում (միաժամանակ տեսողական և լսողական): Ուստի դրանք ցուցադրելուց առաջ աշակերտների համար պետք է հստակ ձևակերպել ցուցադրման նպատակը: Ինչպես նկարի ուսումնասիրության ժամանակ, պետք է կենտրոնացնել և ուղղորդել աշակերտների ուշադրությունը, մինչև որ նրանք վարժվեն դա ինքնուրույն անելուն: Ի տարբերություն նկարի, ֆիլմերն ու տեսարանները ժամանակի ընթացքում փոփոխվող երևույթ են: Իրեն հասնող ինֆորմացիայի ընկալման և վերակոդավորման համար աշակերտը շատ քիչ ժամանակ ունի: Դրա հետևանքով ինֆորմացիայի որոշակի մասը չի ֆիքսվում և հետևաբար հետագա վերամշակման չի ենթարկվում: Ընկալված ինֆորմացիայի վերակոդավորման շղթան նույնն է, ինչ որ նկարի դեպքում: Աշակերտը ընդունած լսողական-տեսողական ինֆորմացիան վերակոդավորում է բառայինի՝ ներքին ձայնով, այնուհետև վերարտադրում է այն բարձրաձայն, երբ պատմում է տեսածն ու լսածը: Ժամանկակից համակարգչային, տեսահոլովակային և այլ տեխնիկական միջոցների կիրառումը հանգեցնում է աշակերտին հաղորդվող ուսումնական ինֆորմացիայի առավելագույն խտացման: Այդ միջոցների կիրառման ժամանակ պետք է զգույշ լինել և շատ չհրապուրվել դրանցով:

Ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներն ունեն իրենց **դրական և բացասական** կողմերը: Այդ միջոցների օնությամբ ֆիլմերի ցուցադրումները դառնում են ավելի դիդակտիկ, ավելի տեսանելի: Բայց դա ուղեկցող էֆեկտ է: Առավել կարևոր է կարողանալ նոր միջոցների կիրառությամբ զարգացնել աշակերտների մտածելու ընդունակությունները: Համակարգչային բազմապիսի ծրարգերը, որոնք թույլ են տալիս ցուցադրել զանազան կադրեր հզոր գործիք են ուսուցչի ձեռքում:

Շատ կարևոր է, թե որտեղ է անցկացվում դասը, և ինչպես է կահավորված դասասենյակը: Երբ դասարանը նորմալ է կոմպլեկտավորված (մինչև 25 աշակերտ), սենյակում կա համակարգիչ, պրոյեկտոր, թվային գրատախտակ, ապա սա իդեալական տարբերակն է:

Հնարավոր է պատմության դասը պատմել, նույն երևույթի վերաբերյալ տեսաֆիլմեր և անիմացիաներ դիտել, երևույթի՝ համակարգչային մոդելավորումով տարբերակը ուսումնասիրել: Կարող է թվալ, որ այդ դեպքում աշակերտների կողմից ուսումնասիրվող նյութի խորը և ամբողջական յուրացումն ապահոված է: Բայց վստահաբար կարելի է պնդել, որ դա այդպես չէ: Աշակերտների որոշ մասը չի հասցնում ինֆորմացիայի հաղորդման մի աղբյուրից արագ անցնել մյուսին, չի կարողանում հարմարվել դասի այդ գերարագ ռիթմին, չի սիրում լսել կադրի ետևից հնչող ձայնը և պրոյեկտորի էկրանից գծագրեր արտագծել: Աշակերտները վարժված են դասարանի հաճելի, մտերմիկ մթնոլորտին, որտեղ կավիճ է, գրատախտակ, ուսուցչի հանգիստ, անշտապ ձայն, շտապողականություն չկա, ինֆորմացիայի հաղորդման ձևը արագ- արագ չի փոփոխվում: Աշակերտները հասցնում են պատկերացնել, մտածել, երևակայել, այսինքն՝ հենվելով իրենց գիտելիքների, հիշողության և կյանքի փորձի վրա՝ ամբողջացնում են այն պատկերները և գաղափարները, որոնց մասին խոսում է ուսուցիչը: Բայց…. Իսկ ո՞րն է ոսկե միջինը: Դժվար է միարժեք պատասխանել, նամանավանդ՝ երբ աշխարհն այսօր արդեն թևակոխել է **արհեստական բանականության** ստեղծման փուլ:

Այսպիսով՝ թվարկենք ուսուցման էլեկտրոնային միջոցների կիրառման դրական և բացասական կողմերը:

Էլեկտրոնային միջոցների կիրառման բացասական կողմերը

1. Տարբեր ձևերով կոդավորված ինֆորմացիայի չափազանց մեծ խտությունը, որը աշակերտները միշտ չէ որ հասցնում են ընկալել և վերամշակել:

2. Էլեկտրոնային միջոցները ձանձրացնում են, աշակերտները վարժվում են էլեկտրոնային արտադրանքի այս կամ այն տեսակին, կտրուկ նվազում է հետաքրքրությունը:

3 Դասապրոցեսից դուրս է մղվում աշակերտի և ուսուցչի կենդանի, զգացմունքային հաղորդակցումը:

4. Ուսուցչի ձայնին վարժված աշակերտը դժվարությանբ է վարժվում կադրի ետևից հնչող տարբեր տոնայնությամբ ձայներին, որի հետևանքով ինֆորմացիայի որոշ մաս կորսվում է:

5. Աշակերտը դասն ընկալում է որոշ չափով որպես ներկայացում, որում ինքը կատարում է ոչ թե անմիջական մասնակցի, այլ կողմնակի դիտողի դեր:

Նշենք, որ եթե կա հնարավորություն կազմակերպելու անհատական կոմպյուտերային աշխատանք, նշված թերություններից շատերը վերանում են:

6. Սարքերը և գործիքները, որպես պլատֆորմ, անընդհատ փոխվում են, ինչը ենթադրում է շարունակական թարմացման ջանք:

7. Աշխարհն այսօր տեղեկատվական պատերազմի մեջ է և աշակերտի համար հաճախ դժվար է լինում զատել ճիշտ տեղեկատվությունը կեղծից:

8.Դեռևս առկա է տեխնոլոգիաների մատչելիության մեծ անհավասարություն `կապված այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են աղքատությունը կամ հանրային կրթության քաղաքականության բացակայությունը:

9. Ավագ սերնդի ուսուցիչները հաճախ չեն տիրապետում նորագույն տեխնոլոգիաներին և նրանց համար դժվար է այս ամենի յուրացումը:

Էլեկտրոնային միջոցների կիրառման դրական կողմերը

1. Երևույթն ամենայն մանրամասնությամբ, առանց ուշադրությունը շեղող էֆեկտների դիտելու հնարավորություն է լինում:

2. Ծագրերը, գրաֆիկները, քարտեզներն ու պատմական երևույթները պատկերվում են հստակ, առանց երկրորդական մանրամասների:

3. Պրոցեսները կարելի է կրկնել բազմաթիվ անգամներ, կանգնեցնել ցանկացած տեղում, ետ պտտել: Դա ուսուցչին թույլ է տալիս անհրաժեշտ տեղում կետրոնացնելու աշակերտների ուշադրությունը, տալու մանրամասն բացատրություններ:

4. Թույլ է տրվում ստանալ և ուսումնասիրել դասին վերաբերող տարբեր կադրեր, ընդլայնել աշակերտի մտահորիզոնը, այն ինչի մասին խոսվում է, տվյալ պահին նաև դիտել:

5 Կարելի է դիմել տեսական նյութին, ստանալ պատմական տեղեկատվություն, թվականներն ու դժվարամաչ անունները բերել էկրանի վրա և անշտապ աշխատել դրանց հետ:

6. Ցուցադրումներն ուղեկցվում են հեղինակային խոսքով (հաճախ նաև տարբեր երաժշտական էֆեկտներով), երբեմն զուգահեռ շարադրվում է նաև տրվելիք նյութը, դասի տեքստը, որոնք ցանկության դեպքում կարելի է անջատել:

7 Հնարավորություն է ընձեռվում մեծ քարտեզից ֆիքսել ցանկացած տարածք ու անմիջապես այն դիտել ավելի խոշոր պլանով, հանգամանալից ուսումնասիրել այն և այլն:

8. Ուսուցչի համար լայն հնարավորություն է ընձեռնվում օտվել պաշարների

շտեմարանից, դրանք փոփոխել կամ արդեն պատրաստի վիճակում կիրառել պատմության դասին: (օ/կ www.khanacademy.org , www.armedushannel.am , e-school Armenia youtube-յան ալիքը, https://lib.armedu.am/ www.brainograph.com/map և այլն)

9. Այն կրթական և վարչական կառավարման գործիք է, քանի որ այն ծնողին և աշակերտին թույլ է տալիս անհապաղ մուտք որձել տվյալների բազաներ(www.emis.am) և տեղեկանալ հանձնարարված դասերի և դրված գնահատականների մասին:

ԳԼՈՒԽ II

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՂԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Տեխնիկական միջոցների օգտաործումը լայն հնարավորություններ են ընձեռում որոնումների, հետազոտական աշխատանքների, պրոբլեմային ուսուցման մեթոդների գործադրման համար: Դրանք պետք է լինեն դաստիարակող և նպաստեն անհատի բարոյական հատկանիշների ձևավորմանը:

Այսօր ուսումնական տեխնիկական միջոցները դարձել են ուսուցման մասսայական միջոցներ: Էկրանահնչյունային միջոցները ուսուցիչներին ու աշակերտներին գրավում են ոչ միայն իրենց պատկերման դինամիկությամբ, ժամանակի ու տարածության նկատմամբ ունեցած ուժով, գործողություններին , դեպքերին ներկա գտնվելու <<էֆեկտի>> պատճառով, այլ նաև այն բանով, որ դրանք սովորողներին հաղորդակից են դարձնում ցուցադրվող երևույթին, շարժում նրանց միտքը, ձևավորում նրանց մտածողությունը: Նրանք կատարում են հետաքրքրություն առաջացնող ազդակի դեր, զարմանք պատճառում:

Ուսուցման տեխնիկական միջոցները դպրոցականին դնում են հուզական վիճակի մեջ, կայունացնում նրա ուշադրությունը, լարում դիտունակությունը: Դրանք սովորողին վարժեցնում են գիտելիքները ձեռք բերել ինքնուրույնաբար, սովորեցնում բազմակողմանիորեն վերլուծել փաստերը և այլն:

Այդ միջոցները կարելի է օգտագործել նաև հասկացությունները արմատավորելիս, որոնք սովորաբար ձևավորվում են գիտական փաստերի, երևույթների, զննումների ,

համադրման և վերլուծության հիման վրա: Սովորողների մեջ առաջանում են հետաքրքրություններ լրացուցիչ նյութեր գտնելու , ընթերցելու համար:

Կինոդասերի կազմակերպումն ու անցկացումը

Սա իրականացնելու համար պահանջվում է մանակավարժական վարպետություն: Կինոդասերը լինում են բազմազան: Մի դեպքում այն կարելի է ցուցադրել մինչև ուսումնական նոր նյութի շարադրումը, որը յուրատեսակ ներածության դեր է կատարում, աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնում դեպի ուսումնասիրվող թեման և հեշտացնում նոր նյութի յուրացումը, մի այլ դեպքում, որը շատ ավելի արդյունավետ է , ֆիլմը ցուցադրվում է ուսումնական նյութի շարադրման ընթացքում: Այս դեպքում ուսուցչի բացատրությունները զուգակցվում են կինոնկարի կամ համապատասխան կադրերի ցուցադրման հետ: Մեկ այլ դեպքում էլ ուսուցիչը ցուցադրում է ուսումնական ֆիլմի մի մասը՝ հաղորդվելիք նյութի սահմաններում, իսկ մյուս մասը թողնում է հաջորդ դասին: Իսկ եթե ֆիլմը ներառում է միայն հաղորդելիք ուսումնական նյութը, ապա այն ցուցադրվում է ամբողջությամբ:

Նման ուսումնական նյութեր շարադրելիս ուսուցչի բանավոր շարադրանքը զուգակցվում է ֆիլմի ցուցադրմամբ և տրվում է համապատասխան բացատրություն:

Կան ուսումնական նյութեր, որոնք ընդգրկում են մի ամբողջական թեմա : Այս թեմաների ուսուցումը ուսուցիչը կարող է իրականացնել հեռուստատեսային հաղորդումների միջոցով թեմայի ուսուցումն ավարտելուց հետո: Այսպիսի դասերը ստանում են ընդհանրացնող, կրկնողական բնույթ: Սակայն բացառված չէ, որ նույն թեման ուսուցանելիս նրա առանձին բաժինների վերաբերյալ ֆիլմի ցուցադրումը սկսվի ներածական զրույցով, իսկ ցուցադրմանը զուգակցեն ուսուցչի հակիրճ բացատրությունները:

Փորձը հաստատել է այն փաստը, որ պատմագեղարվեստական ֆիլմերի միջոցով աշակերտների յուրացման առավելությունները զգալի են: Հանրահայտ են բազմաթիվ իրադարձություններ, դեպքեր ու դեմքեր, որոնք ծածկվել են ժամանակի մշուշով, դժվար է սոսկ խոսքի միջոցով վեր հանել , ճշտորեն արտացոլել անցյալը: Ահա այստեղ է, որ օգնության է գալիս կինոնկարը: Այն ունի նաև դաստիարակչական մեծ նշանակություն: Կինոդասերը զարգացնում են դպրոցականների հետաքրքրությունները , կայունացնում ուշադրությունն ու դիտողականությունը: Սակայն պատմական թեմատիկան ենթարկելով

գեղարվեստական վերամշակման ՝ երբեմն աղճատում են ուսումնական նյութի անմիջականորեն կապված առանձին փաստեր: Այս հանգամանքը խնդիր է դնում վարպետորեն օգտվել կինոֆիլմերից:

Այսպիսով, կինոնկարն ավելի մոտ է դպրոցականների ռոմանտիկայով հարուստ հոգեկան աշխարհին: Դեպքերի զարգացման արագությամբ, մարդկանց իրար նկատմամբ ունեցած կենդանի հարաբերությամբ իսկ պատմական թեմատիկան իր հերոսական առօրյայով ներազդում են աշակերտների վրա, ուսումնասիրվող թեմայի տրամաբանությունը դարձնում հասկանալի: Ուստի, ճիշտ է ասված, որ կինոնկարն անտեսանելին դարձնում է տեսանելի: Այդ տեսանկյունից դպրոցի համար մեծ հնարավորություններ է բացում ինտերնետային կապը:

Պատմության դասի համար ստեղծված են բազմաթիվ պատմական ֆիլմեր, դրանք կարող են լինել ուսումնական ֆիլմեր, փաստավավերագրական կամ գեղարվեստական ֆիլմեր: Այս ընդհանուր կոմպլեքսում իր ուրույն տեղն ունի **ուսումնական կինոնկարը կամ մուլտֆիլմը:** Այն կարելի է օգտագործել դասի բոլոր փուլերում՝ ներկայացնելով վավերագրական նյութեր, անցյալի ու ներկայի իրադարձություններ, ժամանակագրություն և այլն: (Օրինակ 6-րդ դասարանում << Հին Հայաստանի մշակույթը>> թեման ուսումնասիրելիս երեխաները մեծ ոգևորությամբ են դիտում <<Արա Գեղեցիկ>> մուլտֆիկմը[2], 9-րդում՝ <<Սևրի պայմանագիրը>> թեմայի ժամանակ անպայման ցուցադրում եմ այս բացառիկ տեսանյութը (համր)՝ նկարահանված 1919-ի երկրորդ կեսին, որը պահպանվում է ԱՄՆ Ազգային արխիվում: Այն ամերիկացի զորավար Ջեյմս Հարբորդի այցից է Հայաստանի Հանրապետություն: Տեսանյութում, որ հիմնականում Օսմանյան կայսրությունն է ներկայացնում, կան մի քանի կադրեր Կարսից ու Երևանից: Մասնավորապես, պահպանվել է նաև այն տեսարանը, երբ Էջմիածնից Երևան ժամանող Հարբորդին դիմավորում է վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը: Այդ ընթացքում, երկու հեծյալներ ծածանում են հայկական և ամերիկյան դրոշները[3]):

Այսօրինակ կադրերը օգնում են դասարանում կազմակերպել ՝հանդիպում՝ պետական, քաղաքական գործչի , հռչակավոր զորավարի, պատմական անձնավորության հետ:

---

[2] https://www.youtube.com/watch?v=H5BnoFr6L8Q

[3] https://drive.google.com/file/d/1O1Wbiwsp93YcyVh88ZuwDi6MFE18aJM1/view?usp=sharing

Ուսումնական ֆիլմերը դասակարգվում են մի քանի խմբերի՝

ա) Ամբողջական ֆիլմեր՝ նվիրված են որևէ մեծ թեմայի և բաղկացած են լինում մի քանի մասերից(օ/կ 6-րդ և 10-րդ դասարաններում <<Հին Հայաստանի մշակույթը>> թեմայի շրջանակներում <<Բարև Էրգիր>> ֆիլմաշարից օգտագործում եմ հատվածներ <<Նեմրութ>> ֆիլմից[4]):

բ)Հատվածային ֆիլմեր, որոնք ցուցադրում են որևէ թեմայի իրար հետ կապված մի քանի հատվածներ: Յուրաքանչյուր կինոհատվածն առանձնացված է վերնագրով և ենթավերնագրով:

գ)Միկրոֆիլմ – կինոհատվածներ: Ցուցադրում են որևէ երևույթ, դեպք, փաստ և այլն: Ցուցադրումը տևում է 5-7 րոպե: Օգտագործվում է դասի բոլոր փուլերում (օ/կ 8-րդ դասարանում <<Ազատագրական պայքարը Սյունիքում>> թեման ուսումնասիրելիս <<Հուսո աստղ>> ֆիլմից ցուցադրում եմ Հալիձորի ճակատամարտի դրվագը (դասապրոցեսի ընթացքում կատարված կադրերը կտեղադրեմ կից ներկայացվող սահիկաշարում)):

դ) Կինոօղակներ: Սրանք օղակաձև կապված ժապվեններ են որոնք կարելի է օգտագործել ուսումնական նոր նյութը հաղորդելու, կրկնությունների , սովորողների ինքնուրույն պատասխանների պահին:

Ուսումնական հեռուստահաղորդումներ, գեղարվեստական, պատմական ֆիլմեր:

Օգտագործվում են դասի ընթացքում: Նման հաղորդումները համապատասխանեցվում են դպրոցական ծրագրերին: Դրանց հիմնական նպատակն են՝

ա) Խորացնել ուսումնասիրվող նյութը,

բ) Ցուցադրել, տալ այն, ինչը ուսուցիչը չի կարող անել սովորական դասապրոցեսի ընթացքում:

Այս առումով մեզ լայն հնարավորություն է տալիս YOUTUBE հավելվածը, որտեղ զետեղված են բազմաթիվ ուսումնական նյութեր(օ/կ շրջված դասարան մեթոդը կիրառելիս հաճախ օգտագործում եմ e-school Armenia հավելվածից ուսումնական նյութեր, << Հայոց ցեղասպանությունը>> թեման ուսումնասիրելիս հանձնարարում եմ դիտել << Մայրիկ>>, << Արտույտների ագարակը>>, << Արարատ>> և թեմային առնչվող որևէ գեղարվեստական

[4] https://www.youtube.com/watch?v=y3so-D7e3Mw

ֆիլմ, դրանք ուղարկում եմ աշակետների խումբ, տեղադրում եմ Google forms տիրույթում կամ Padlet պատին ամրացնում: հաջորդ դասին կազմակերպում քննարկումներ ,լսում վերլուծություններ)

Ուսուցչի գլխավոր խնդիրն է ճիշտ որոշել ֆիլմի տեղը դասի ժամանակ, այնպես անել, որ նյութի ցուցադրումն անպայման կապվի դպրոցականների ինքնուրուն ուսուցման և տնային առաջադրանքի հետ:

Սովորողների երևակայության և պատկերավոր մտածողության զարգացման հիանալի միջոց է **ձայնային հաղորդագրությունը**: Այն ունի այն առանձնահատկությունը, որ ձևավորում է սովորողների ուշադրությունը, լարում լսողությունը, ավելի տպավորիչ դարձնում դասը: (Համացանցում պահպանվում են Վ. Ի Լենինի, Մ. Մելքոնյանի և այլ պատմական դեմքերի ձայնային հաղորդագրությունները, որոնք կարելի է լսել դասի ժամանակ և կատարել համապատասխան վերլուծություններ: << Հայրենական Մեծ պատերազմ>> թեման ուսումնասիրելիս, 12-րդ դասարան , ես հաճախ դասը սկսում եմ Յու.Լևիտանի պատերազմը հայտարարող ձայնագրությունից և ավարտում այն հաղթանակի մասին արված հայտարարությունով[5]):

Ուսուցողական նշանակություն ունենեն **վիրտուալ էքսկուրսիաները** դեպի թանգարանները, պատմաակն վայրերը, գործարանները և այլն:(6-րդ և 10-րդ դասարաններում << Հին Եգիպտոս>> թեման ուսումնասիրելիս հաճախ ցուցադրում եմ եգիպտական փարավոն Թութանհամոնի գեզմանի պեղումների մասին ֆիլմը. վիրտուալ էքսկուրսիա անցկացնում << Արքաների հովտում>>[6]:)

Հաղորդումներ, որտեղ նյութը ներկայացնոըում է որևէ հայտնի անձ:

Այսպիսի նյութերով աշխատելիս հնարավոր է լինում թեման ներկայացնել ավելի պատկերավոր, տպավորիչ, քանզի ներկայացնողը ավելի մասնագիտորեն և ազդեցիկ է կարողանում մատուցել նյութը (օ/կ 8-րդ դասարանում <Ինքնապաշտպանական մարտերը 1915թ>> թեման ուսումնասիրելիս օգտվում եմ հայտնի դերասան Ռուդոլֆ Ղևոնդյանի հնչունավորած նյութերից[7])

---

[5] https://www.youtube.com/watch?v=Q-94kQ4X2oU

[6] https://www.youtube.com/watch?v=Q1OBWYwepBw

[7] https://www.youtube.com/watch?v=IUABJz7ynHo&t=3s

Այսպիսի նյութերով աշխատելիս ֆիլմը հաճախ չի ուղեկցվում ուսուցչի խոսքով, այն հնչյունային է , էկրանից խոսում է հաղորդավարը: Ուսուցիչը շարադրում է ուսումնական նյութը , կազմակերպում և ստուգում աշակերտների ինքնուրույն աշխատանքը՝ ֆիլմի մասերի կամ հատվածների ցուցադրման միջև ընկած ժամանակահատվածում կամ ցուցադրումից հետո:

Ծրագրային գործիքներ և տիրույթներ, որոնց օգնությամբ ուսուցիչը պատրաստում է թեմային առնչվող նյութեր, դրանք պահպանում և հանձնարարում աշակերտներին: (Quizizz , Kahoot, Socrative, Google forms, Padlet, Learning Apps, PPT և այլն)

Այսօրինակ նյութեր պատրաստելիս կամ արդեն պատրաստի նյութերից օգտվելիս ուսուցչից պահանջվում է ահռելի մեծ ժամանակ և աշխատանք : Երբեմն հարկ է լինում դրանք լրացնել, ձևափոխել, ավելի հարստացնել: Այս գործիքներով կարելի է պատրաստել սահիկաշարեր, թեմայի ամփոփման համար հարցաշարեր, որոնք հնարավորություն են տալիս ուսուցչին կատարել ձևավորող և միավորային գնահատում: Կան նաև այնպիսի գործիքներ, որոնց կիրառման դեպքում նյութի ցուցադրումն ընդհատվում է ամենահետաքրքիր փուլում և աշակերտը կարող է դիտել շարունակությունը միայն այն ժամանակ, երբ կարողանում է պատասխանել տրված հարցերին: Կան նաև այնպիսիները, որոնք հնարավորություն են տալիս ուսուցչին ձայնագրել իր խոսքը և ցուցադրվող նյութի հնչյունավորումը կատարել իր իսկ ձայնով, որին աշակերտները արդեն շատ սովոր են: Ինչ խոսք, այս բոլորի արդյունքում մենք ունենում ենք բազմաբովանդակ, ավելի հետաքրքիր և տպավորիչ դաս, իսկ պատրաստի նյութերը ուսուցիչը կարող է պահպանել ամպային տեխնոլոգիաներում և կիրառել տարիներ շարունակ (Օ/կ իմ պահպանած նյութերից կկիսվեմ ձեզ հետ տարբեր առարկաների վերաբերյալ ուսուցողական կայքերի կատալոգով, ինչպես նաև 9-րդ դասարանում կիրառվող << Սեր խաղով)[8]

2020 թ., երբ աշխարհում մոլեգնում էր թագավարակը, շատ երկրներում, այդ թվում և Հայաստանում, կրթությունը կազմակերպվեց **հեռավար** ձևաչափով: Անցյալում սա թերևս կհամարվեր ֆանտաստիկայի ժանր, սակայն մեր օրերում համացանցը տվեց սրա

---

[8]https://docs.google.com/document/d/1Ku27_vUoDsIFRWEUe8iEHVFAyQtCvfLf/edit?usp=sharing&ouid=107375447734256796376&rtpof=true&sd=true
https://drive.google.com/file/d/12dukHeHj3N2M3sC5UUk0lWXKDniTLE3S/view?usp=sharing

հնարավորությունը և ՏՀՏ գործիքներին տիրապետելը ավելի հրամայական դարձավ: Շատ ուսուցիչներ պատվով հաղթահարեցին նաև այս փուլը:

Եզրակացություն

Այսպիսով , վերը նշվածներից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- 21-րդ դարի ուսուցիչը պետք է տիրապետի համակարգչին, կարողանա օգտվել համացանցից և զանազան ՏՏ գործիքներից: Այս ամենի համար անհրաժեշտ է ինչպես բազային կրթություն տվալ ոլորտից, այնպես էլ շարունակական բնույթ կրող, ինքնակրթվելուն ուղղված հետևողական աշխատանք:
- ՏՀՏ-ի կիրառումը աշակերտների մոտ զարգացնում է թվային և մեդիա կարողունակությունը, սովորել սովորելու կարողունակությունը:
- ՏՀՏ-ի օգտագործումը պատմության դասին ,անշուշտ ,խրախուսվում է, նույնիսկ՝ անհրաժեշտ է, սակայն այն չպետք է փոխարինի ուսուցչին՝ ստվերում թողնելով վերջինիս դերն ու նշանակությունը:
- ուսուցման տեխնիկական միջոցներն օգնում են ձեռք բերել հարուստ , կայուն ու խորը գիտելիքներ, ավելի ճիշտ ու հեշտ սահմանել գիտական հասկացությունները և լուծել ճանաչողական բնույթի խնդիրներ:
- ՏՀՏ գործիքները հնարավորություն են տալիս բարեհաջող կիրառել <<Շրջված դասարան>> մեթոդը, հնչյունավորել ուսուցչի ձայնը, նյութը մատուցել դանդաղեցված, խոշոր պլանով, ավելի մանրամասն, կատարել վիրտուալ էքսկուրսիաներ, կազմակերպել << հանդիպում>> պատմական գործիչների հետ, հեռավար ձևաչափով դասեր անցկացնել և այլն:
- ՏՀՏ-ով հագեցած դասերը էլ ավելի հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում ուսումնական գործընթացը:
- Այն իրականացնելու համար ուսուցչից պահանջվում են նախապատրաստական

լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է:

- ՏՀՏ-ով ուղեկցվող դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից՝ վերանում է: Այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխուժություն:
- Առկա բազմաթիվ ծրագրերի օգնությամբ կարելի է իրականացնել ձևավորող և միավորային գտնահատական:
- Որոշ ինքնուրույն կամ խմբային աշխատանքներ պահանջում են աշակերտի անհատական ուժերով ՏՀՏ-ի կիրառմամբ նյութի ստեղծում, որը ենթադրում է ստեղծագործական մտածողություն, ճանաչողություն, երևակայություն, որոնողական և հետազոտական աշխատանք, աշխարհայացքի ընդլայնում:
- Համացանցը հագեցած է ապատեղեկատվությամբ: Ուստի աշակերտին պետք է սովորեցնել ճշտել ինֆորմացիայի աղբյուրը, զատել <<ֆեյքը>> ռեալ տեղեկությունից , ապա նոր կիրառել դրանք:
- Բացի վերը նշվածից, ՏՀՏ-ով հագեցած դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել:

Օգտագործված գրականություն

1. Հ. Ղևոնդյան << Ինչպես նախապատրաստել և անցկացնել պատմության դասը>> (Երևան, <<Լույս>> 1973թ):

2. Հ. Ղևոնդյան <<Պատմության դասավանդման մեթոդիկա>> Երևան, 2001թ.

3. Տեխնիկական միջոցների օգտագործումը դպրոցներում: 1975թ.

4. Բացահայտելով ՏՀՏ-ներն այսօր՝ հանուն վաղվա: 2006թ. նոյեմբերի 22-23 –ի համաժողովից: (Հայաստանի դպրոցների փոխկապակցման <<Փրոջեքթ Հարմոնի>>-ի ծարագից):

5. Հ. Հակոբյան <<Դասավանդման գործընթացում կիրառվող ինֆորմացիոն բլոկները>>: